# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

## 25 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆ

## ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

25 հունիսի 2025 թվական

# ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 25 անդամներ:

Բացակա էին՝ Հերմոն Ավետիսյանը, Մարո Մարգարյանը, Արթուր Մկրտչյանը, Արտյոմ Պետրոսյանը, Անի Ազատյանը, Անդրանիկ Կիրակոսյանը, Արաքսյա Համբարձումյանը, Սոկրատ Հովսեփյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Սուրեն Մկրտչյան, Խորեն Ուստյան, Գոհար Հովսեփյան, Անժելա Գուլգուլյան, Աննա Հովհաննիսյան, Արփինե Դավթյան, Արսեն Եփրեմյան, Խորեն Հովակիմյան, Գևորգ Զաքարյան, Աիարոն Հակոբյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը**

**Նիստը արձանագրում էր բաժնի պետի ժ/պ /2.1-11/՝ Անժելա Գուլգուլյանը**

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2025 թվականի հունիսի 25-ի վեցերորդ հերթական նիստի օրակարգը՝

1.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.2 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԻՍ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.3 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԺԵԼԱ ԳՈՒԼԳՈՒԼՅԱՆ/

1.4 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 27 ՏՆԱԿԻ ԲՆԱԿՈՒՀԻ ԱՄԱԼՅԱ ՅՈՒՐԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

1.5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 53 Ա ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ԳԱՐԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

1.6 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ՓՈՂՈՑ 43/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.7 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԱՆ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.8 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԱՆ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.9 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՆԴՐԱՆԻԿ ԱՇՈՏԻ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻՆ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.10 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Ս.ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 28/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.11 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 142-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և 13-րդ հոդվածի 12-րդ կետով՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքում տնային կենդանիներ պահելու և հաշվառելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 143-Ն)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՇԱՀԱԳՈՐԾԵԼԻՍ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)***

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասով, 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Տալ համաձայնություն՝ Արտաշատ համայնքի ղեկավարի կողմից համայնքի կարիքների համար համայնքապետարանի բնականոն գործունեությունը կազմակերպելու նպատակով ծառայողական ավտոմեքենա հատկացնելու փոխարեն, որպես այլընտրանքային եղանակով իրականացվող ծախսեր, տրամադրելու փոխհատուցում վառելանյութի տեսքով այն աշխատակիցներին, ովքեր համայնքի կարիքների համար շահագործում են մասնավոր ավտոմեքենաները:

2.Այլընտրանքային վառելանյութի ծախսի նորմայի հաշվարկման համար հիմք ընդունել արտադրող գործարանի կողմից տվյալ ավտոմեքենաների 100կմ վազքի համար սահմանված վառելանյութի ծախսի նորման: Անհրաժեշտության դեպքում կիրառել մինչև 10% ուղղիչ գործակիցներ:

3.Մեկ հաշվարկային միավորի համար այլընտրանքային փոխհատուցմամբ վառելանյութի ծախսի տարեկան չափաքանակ սահմանել 730լ (ծախսվող վառելանյութի ծավալը՝ 2.0 լ x 365 օր):

4.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 144-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆԺԵԼԱ ԳՈՒԼԳՈՒԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Արխիվային գործի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է**.

1. 2006 թվականից մինչև 2022 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Արտաշատ համայնքի սեփականություն համարվող սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ ենթակետերով նշված արխիվային փաստաթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:

1) Արտաշատ համայնքի Ազատավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ հանդիսացող Ազատավանի համայնքապետարանի 2016-2021թթ. արխիվային փաստաթղթեր.

2) Արտաշատ համայնքի Բերքանուշ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ հանդիսացող Բերքանուշի համայնքապետարանի 2006-2022թթ. արխիվային փաստաթղթեր:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 145-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 27 ՏՆԱԿԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԱՄԱԼՅԱ ՅՈՒՐԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, ուսումնասիրելով Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Մ.Խորենացի փողոցի թիվ 27 տնակի բնակչուհի Ամալյա Յուրիկի Սիմոնյանի՝ 17 հունիսի 2025 թվականի Ք-7640 դիմումը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 10.07.01.54 գործառնական դասակարգման (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն հատկացնել Ամալյա Յուրիկի Սիմոնյանին՝ ամուսնու՝ Մաջիդ Մորթեզայի Բաբաասադի Էսֆանդաբադի բուժման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 146-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 53 Ա ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ԳԱՐԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, ուսումնասիրելով Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Ա.Խաչատրյան փողոցի թիվ 53 Ա տան բնակիչ Գարիկ Մկրտչյանի՝ 17 հունիսի 2025 թվականի Ք-7629 դիմումը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 10.07.01.54 գործառնական դասակարգման (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն հատկացնել Գարիկ Արամայիսի Մկրտչյանին՝ մոր՝ Սուսաննա Սամվելի Գրիգորյանի բուժման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 147-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ՓՈՂՈՑ 43/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)***

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 613-րդ հոդվածով, Հողային օրենսգրքի 48-րդ և 76-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 12 ապրիլի 2001 թվականի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետը և հիմք ընդունելով Մ.Օհանյանի 17.06.2025 թվականի Ք-7650 դիմումը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23-ի փողոց 43/6 հասցեում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականությունը հանդիսացող, 03-001-0033-0120 կադաստրային ծածկագրով՝ 0.0006 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը վարձակալության իրավունքով տրամադրել Մելանյա Վարուժանի Օհանյանին՝ (ծնված՝ 27/07/1970թ.) գովազդային վահանակ տեղադրելու նպատակով:

2.Վարձակալության տարեկան վճարը սահմանել 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3.Վարձակալության ժամկետը սահմանել 5 (հինգ) տարի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 148-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^3$-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի 29 դեկտեմբերի N 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 22 դեկտեմբերի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Ոստան բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ 2025 թվականի հունիսի 10-ի թիվ 2/փ-163 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2025 թվականի հունիսի 17-ի թիվ 01/04001-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել՝ Արտաշատ համայնքի Ոստան գյուղում գտնվող 03-077-1098-0001 կադաստրային ծածկագրով 0,012714 հա մակերեսով և 03-077-0040-0062 կադաստրային ծածկագրով 0,002782 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ դասելով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի:

2.Նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և Արտաշատ համայնքի Ոստան գյուղի գոտևորման նախագծում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 149-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/***

***ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի 29 դեկտեմբերի N 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 22 դեկտեմբերի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Ոստան բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ 2025 թվականի հունիսի 10-ի թիվ 2/փ-162 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2025 թվականի հունիսի 17-ի թիվ 01/04002-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել՝ Արտաշատ համայնքի Ոստան գյուղում գտնվող 03-077-0116-0006 կադաստրային ծածկագրով 0,10205 հա մակերեսով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասի և 03-077-0116-0007 կադաստրային ծածկագրով 0,348197 հա մակերեսով հողամասից 0,094 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ դասելով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի:

2.Նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և Արտաշատ համայնքի Ոստան գյուղի գոտևորման նախագծում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 150-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՆԴՐԱՆԻԿ ԱՇՈՏԻ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ

կետով, ուսումնասիրելով Ա. Բարեղամյանի 22/06/2025 թվականի N ՃՀԱ/228/22357-25 հայտը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Դիմիտրով գյուղում գտնվող, Անդրանիկ Աշոտի Բարեղամյանին սեփականության իրավունքով պատկանող, 03-038-0206-0006 կադաստրային ծածկագրով, 0,635 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամասի, իսկ գործառնական նշանակությունը փոփոխել՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսություն և պարիսպ կառուցելու նպատակով:

2. Կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին դիմումատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 151-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Ս.ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 28/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետով, 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով և ուսումնասիրելով Է.Արևշյանի 27/05/2025 թվականի թիվ Ք-6787 դիմումը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Ս.Շահումյան փողոց 28/1 հասցեում գտնվող՝ 03-001-0156-0116 կադաստրային ծածկագրով 0,0672հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքի կարգով օտարել Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Ս.Շահումյան փողոց 28 հասցեում գտնվող, 03-001-0156-0115 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և 1283,07քմ մակերեսով բնակելի տան, 204,44քմ մակերեսով օժանդակ շինության սեփականատեր՝ Էլուշ Մամիկոնի Արևշյանին/ծնված 28/08/1949 թվականին/՝ հողամասն ընդլայնելու նպատակով:

2.Հողամասի վաճառքի գինը սահմանել 13 800 000 /տասներեք միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3.Օտարման գործընթացը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 152-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 10 -ին, ժամը 11:00-ին:

2.Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի ավագանու նիստերի դահլիճում, հասցեն ք.Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց, թիվ 62:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 153-Ա)*

Ավագանու անդամներ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱՐԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՍՈՖԻԱ ՈՍԿԱՆՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍԱՅԱԴՅԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ԱՇԻԿՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԴԵՐՄՈՅԱՆ

ԱՐՄԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ_______________

*Նիստն արձանագրեց՝* Անժելա Գուլգույանը _______________